



COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր՝ Pfizer և Moderna ԵՐԿՐՈՐԴ ԴԵՂԱՉԱՓԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ



ԵՐԲ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱՍ PFIZER ԿԱՍ MODERNA ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ԻՍ ԵՐԿՐՈՐԴ ԴԵՂԱՉԱՓԸ

Եթե դուք ստանում եք COVID-19-ի դեմ Pfizer կամ Moderna պատվաստանյութ, ձեզ անհրաժեշտ կլինի 2 դեղաչափ՝ հիմնական պատվաստումների շարքն ավարտելու համար: Ձեր 2-րդ դեղաչափը ստանալու ժամանակը կախված է ձեր անհատական վիճակից:




Եթե դուք 12-64 տարեկան եք՝

- **Դուք կարող եք ստանալ ձեր երկրորդ դեղաչափը ձեր առաջին դեղաչափից 8 շաբաթ անց:** Սա պայմանավորված է նրանով, որ առաջին և երկրորդ դեղաչափերի միջև ավելի երկար ընդմիջումը, ըստ երևույթին, բարելավում է պատվաստանյութերի արդյունավետությունը: Բացի այդ, այն նաև նվազեցնում է սրտամկանի բորբոքման (միոկարդիտ) արդեն իսկ հազվադեպ վտանգը: Արական սեռի երիտասարդները (12-39 տարեկան) գտնվում են սրտամկանի բորբոքում ունենալու ամենաբարձր վտանգի ներքո:
- **Եթե ձեզ անհրաժեշտ է լինվի պատվաստվել ավելի շուտ,** դուք պետք է ստանաք ձեր երկրորդ դեղաչափը ավելի վաղ՝ Pfizer պատվաստանյութի առաջին դեղաչափից առնվազն 3 շաբաթ անց և Moderna պատվաստանյութի առաջին դեղաչափից առնվազն 4 շաբաթ անց: Այդպիսի օրինակներ են՝ եթե ձեր բնակության, աշխատանքի կամ ճամփորդության վայրում կա համայնքային լայն տարածում, եթե դուք գտնվում եք ծանր հիվանդանալու ավելի բարձր վտանգի ներքո, կամ եթե դա ձեզ անհրաժեշտ է ճանապարհորդության, աշխատանքի կամ դպրոցի համար:
- Խոսք է ձեր բժշկի հետ, եթե վստահ չեք՝ երբ է ձեր վիճակի համար երկրորդ դեղաչափը ստանալու լավագույն ժամանակը:

Եթե դուք՝

- Ունեք միջին կամ խիստ իմունային անբավարարություն
- 65 տարեկան եք կամ ավելի մեծ
- 5-ից 11 տարեկան եք

Դուք պետք է ստանաք ձեր երկրորդ դեղաչափը ավելի վաղ՝ ձեր Pfizer պատվաստանյութի 1-ին դեղաչափից առնվազն 3 շաբաթ անց և ձեր Moderna պատվաստանյութի 1-ին դեղաչափից առնվազն 4 շաբաթ անց:



Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [Ինչպես Պատվաստվել](https://www.vaccinate.lacounty.gov) կայքէջ:

